

Քննարկվեցին առողջապահական ոլորտին վերաբերող հարցեր 24.10.2017

Հոկտեմբերի 24-ին Գեղարքունիքի մարզպետարանում մարզի առողջապահական հաստատությունների տնօրենների հետ հերթական խորհրդակցությունն անցկացրեց Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Արտաշես Նիկոյանը: Օրակարգում քննարկվեցին մի շարք հրատապ խնդիրներ, որոնց կատարման համար տրվեցին համապատասխան հանձնարարականներ: Ինչպես զեկուցեց Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական ապահովության վարչության պետ Անուշ Պողոսյանը, վերջին երկու ամիսների ընթացքում մարզի հիվանդանոցային ծառայություններ մատուցող բուժհաստատություններում նկատվում է վճարովի ծառայությունների աճի միտումներ: Մարզպետի տեղակալ Արտաշես Նիկոյանը հրահանգեց բուժհաստատությունների տնօրեններին՝ ամենօրյա ուշադրության ու հսկողության տակ պահել վճարովի ծառայությունների ծավալների աճի խնդիրը՝ ապահովելով բավարար ֆինանսական մուտքեր:

Անդրադառնալով առողջության առաջնային պահպանման օղակում իրականացվող սքրինինգային հետազոտությունների ընթացքին՝ Անուշ Պողոսյանը հայտարարեց, որ ներկա դրությամբ մարզի բուժօգնության կողմից բնակչության շրջանում շաքարային դիաբետի հետազոտությունը կատարվել է 74 տոկոսով, արգանդի վզիկի քաղցկեղի հետազոտությունը՝ 64 տոկոսով: «Հետազոտությունները 100 եւ ավել տոկոսներով կատարել են Դպրաբակի, Ծովինարի եւ Զուլաքարի բուժամբուլատորիաները, Գեղիովիտի ԱԱՊԿ-ն եւ Ճամբարակի ԱԿ-ն: Իսկ Ծովակի ԱԱՊԿ-ն նախատեսված առաջադրանքը կատարել է 124 տոկոսով: Մինչև տարեվերջ դեռևս բավարար ժամանակ կա, որպեսզի մյուս բուժհաստատությունները եւս կարողանան ամբողջությամբ կատարել իրենց առջև դրված խնդիրները»,- ներկայացրեց Անուշ Պողոսյանը, միաժամանակ առաջարկելով հիվանդանոցային վճարովի ծառայությունների եւ սքրինինգային հետազոտությունների ընթացքին հերթական խորհրդակցությամբ անդրադառնալ նոյեմբերի առաջին կեսից հետո:

Քննարկվեց նաեւ բժշկական թափոնների չեզոքացման խնդիրը, որի շուրջ մարզպետի տեղակալը տվեց հստակ հանձնարարական՝ առաջացած բժշկական թափոնները չեզոքացնել միայն համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպության հետ, օրենքով սահմանված կարգով: Խորհրդակցության ընթացքում խոսք գնաց նաեւ մարզում «Պապիլումա» վիրուսի դեմ իրականացվելիք պատվաստումների ներդրման մասին: Վարչության պետի ներկայացմամբ՝ այս պահին կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ: Նոր պատվաստանյութի ներդրման կազմակերպման նպատակով Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանի կարգադրությամբ կազմվել է համապատասխան հանձնաժողով: